



«01» դեկտեմբերի 2009թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 260

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N106 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 2009 թվականի նոյեմբերի 13-ի N 5-327-09 գրությունը և ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի բնակիչ Անահիտ Մխիթարի Մարտիրոսյանի 2009 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի հուլիսի 30-ի «Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով աջակցություն ստացող անձանց ցուցակները հաստատելու մասին» N106 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

հրամանի N1 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով ՀՀ քաղաքաշինության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաշվառված, բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով աջակցություն ստացող անձանց ցուցակի 13-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

13	Մարտիրոսյան Անահիտ	AB0589446	գ.Առափի	7	4	6693.8
----	--------------------	-----------	---------	---	---	--------

2. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում են անձամբ:

Նախարար՝

Վ. Վարդանյան

«01» դեկտեմբերի 2009թ.

ք. Երևան